ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՈԴՈԼՅԵԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ

Վ. Ռ. ԴՐԻԳՈՐՅԱՆ

Լեհահայոց պատմության վերաբերյալ իրենց գործերում բուրժուական պատմաբանները հաճախ գրել են լեհահայերի մեծ հարստությունների, հոխության և պերճանքի մեջ ապրած մեծատուն վաճառականների ու պաշտոնյաների, ունևոր կալվածատերերի մասին և երբեմն ստացվել է այն տպավորությունը, որ այդ վայրերում հավաքված և պետական մարմիններից ու առանձին իշխաններից բազմաթիվ արտոնություններ ստացած հայերն ապրել են առատության ու լիության մեջ և խորթ են եղել նրանց թշվառությունն ու կարիքը. Սակայն դա այդպես չէ։ Այդ գաղութներում իրոք կային մեծ հարստություն դիզած անձինք, արևելքի ու արևմուտքի միջև առևտուր անող հաջողակ վաճառականներ, մեծ եկամուտներ ունեցող պետական չինովնիկներ, վաշխառուներ ու կալվածատերեր, բայց դրանց կողքին եղել են նաև շահագործված և ընչազուրկ մարդիկ, որոնք ապրել են ծանր կարիքի ու զրկանքների մեջ։

Գաղութներում ապրող հայ հասարակությունը որոշակիորեն բաժանված էր տարբեր դասակարգերի։ Այդ մասին ուշագրավ տեղեկություն կա Ռաշկովի հայ գաղութի համար Օգսենտ վարդապետի կազմած կանոններում (XVIII դ.)։ Խոսելով զանազան առիթներով եկեղեցու սպասավորներին կատարելիք դրամական վճարումների մասին, Օգսենտ վարդապետը նշում է, թե ի՞նչ չափով էին կատարվելու վճարումները. «Պսակդրամին ի տօլվաթաւորաց, կարողութեան գօրայ. ի մէջձեռաց Ա ոսկի. և ի րէնճբէրից կէս ոսկի»[1]։ «Տօլվաթաւոր»-ները, ինչպես հայտնի է, շահագործող դասակարգի ներկայացուցիչներն էին, որոնք իրենց ձեռքն էին վերցրել նաև գաղութի ներքին ղեկավարման գործը։ Դրանք վաճառականներ ու բարձրաստիճան պաշտոնյաներ էին, որոնք անշարժ գույքից բացի մեծ դրամագլուխներ ունեին։ «Տօլվաթաւորաց» և «րէնճբերից» արանքում հիշատակվում է նաև մի երրորդ «մէջձեռաց» դաս։ «Մէջձեռք»-ը նշանակում է միջին դաս, այսինքն հարուստների և չունևորների միջև եղած միայն մասամբ ապահովված դաս։ Օգսենտն, ըստ երևույթին, նկատի ունի արհեստավորներին, առևտրականների մոտ զանազան օժանդակ աշխատանքներ կատարող կամ մանր ու աննշան առևտրով զբաղվողներին, որոնք այս կամ այն չափով կարողանում էին իրենց համար ապրուստի միջոցներ ապահովել և որոնց թիվը փոքր չէր Ռաշկովում ու պոդոլյան մյուս գաղութներում։

«Րէնճբէր»-ներն արդեն ունեցվածքային աստիճանակարգի ամենաստորին սանդուղքի վրա գտնվողներն էին, որոնք շահագործման էին ենթարկվում քաղաքային վերնախավի կողմից։ Սա ամենաիրավազուրկ և թշվառ դասակարգն

---

1 Մ. Բժշկյան. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 17[illegible]։

էր, որին վիճակված էր օրն ի բուն աշխատել իր գոյությունը մի կերպ պահպանելու համար։

Կամենիցյան դատարանի արձանագրությունները ժլատ, բայց պերճախոս փաստեր են մատակարարում հայ գաղութի ներսում եղած սոցիալական շերտավորումների, գույքային անհավասարության մասին։ Փարթամ և անհոգ ապրող հայ մեծատուններից բացի հիշատակվում են նաև նրանց մոտ ծառայող ընչազուրկ հայ մարդիկ։ Մեծ թվով չունևոր մարդկանց առկայության մասին է վկայում այն փաստը, որ Կամենիցում, Ռաշկովում, ինչպես և, հնարավոր է, պոդոլյան այլ գաղութներում, կարիք է զգացվել աղքատների համար հիվանդանոց բաց անելու։ Կամենիցի դատարանի արձանագրություններում հաճախ հանդիպում ենք անվճարունակ պարտապանների գործերի, որոնք չկարողանալով ժամանակին մարել իրենց պարտքերը և կամ չունենալով համապատասխան երաշխավորողներ, որ դարձյալ աղքատության նշան էր, պատրժվել են օրենքի ողջ խստությամբ՝ բանտ են նետվել կամ զրկվել իրենց վերջին ունեցվածքից[2]։

Հետաքրքրական է, որ գաղութների ներքին ինքնավարման մարմինների մեջ, ի թիվս այլ պաշտոնյաների, եղել է նաև հատուկ մեկը, որի պարտականությունն էր խնամք տանել աղքատ, ընչազուրկ, հիվանդ մարդկանց, ինչպես և հյուրերի նկատմամբ։ Այդ պաշտոնյան կոչվում էր «աղքատաց տրնտես»։ «Աղքատաց տրնտեսն,— կարդում ենք Օգսենտի կանոններում,— պի հոգայ զպէտսն ֆախիրնուն, անճարակնուն, հիւանդաց և հիւրից խարիպ խօնախեկից»։ Նշվում է նաև այդ նպատակի համար միջոցներ հայթայթելու կարգը։ «Աղքատաց տրնտեսը» եկեղեցու մուտքի մոտ ունենալու էր գանձանակ և «կու ժողվէ զողորմութիւն կամաւոր»։ Նա ողորմություն էր հավաքելու նաև թաղումների, մատաղի ու այլ արարողությունների ժամանակ՝ «ըստ ատաթին Հայոց»։ Նրա տրամադրության ներքո լինելու էր «սբիթալ» (հոսպիտալ, հիվանդանոց) կոչված մի սենյակ, «ուր ժողովին և բնակեն անճարակ և հիւանդ, և հիւր եկած հայազգն»։ Անճարակների մահվան դեպքում նա էր կազմակերպում թաղումը[3]։

«Աղքատաց տրնտեսի» ու նրա պարտականությունների վերաբերյալ Օգսենտ վարդապետի թողած այս նյութերն արժանի են հատուկ ուշադրության։ Այստեղ կարևոր է ոչ միայն ընչազուրկ մարդկանց նկատմամբ առկա հոգատարությունը, այլև այն, որ կարիք է եղել համայնքի ներքին կյանքի հարցերը կարգավորող կանոնների մեջ հատուկ հոդվածով աղքատների նկատմամբ որոշ խնամք ապահովել։ Ուրեմն եղել են բավական թվով խեղճ ու անօգնական մարդիկ, որոնց գոյության պահպանման հոգսը պետք է իր վրա վերցներ համայնքը։

Հակոբ կաթողիկոսը լեհահայերին ուղղած 26 հունիսի 1410 թվակիր իր կոնդակում, ինչպես հիշատ նկատել է պրոֆ. Ա. Աբրահամյանը[4], մատնացույց

---

2 ЦГИА Укр. ССР, ф. 39, оп. 1, ед. хр. 8, էջ 30բ, 48բ, 77բ, 84բ։

3 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 171։

4 Ա. Դ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Ա, Երևան, 1964, էջ 207։

է արել այդ գաղթավայրերում եղած սոցիալական դասերը. «Պատվական և սրբասէր քահանայիցդ, աստուածասէր և բարեպաշտ պարոնացդ և ավագաւորացդ, փառաւոր խաւճանոյդ և պուռճէսնոյդ, իմաստուն վաճառականացդ. հարկևոր և բարեգործ տանուտրացդ, ձեռնահմուտ արուեստագէտացդ, աշխատասէր հողագործացդ, եւ ամենայն հայասեռ և քրիստոսաստուածադաւան մերոց ժողովրդականացդ»[5]։ Այստեղ հիշատակվում են և՛ հոգևորականները, և՛ խոջաներն ու բուրժուաները, վաճառականներն ու մյուսները. փաստորեն տրվում է հասարակության աստիճանակարգը։

Հասարակության սոցիալական խավերի ունեցվածքային մեծ տարբերությունների մասին են վկայում Կամենեց-Պոդոլսկի հայկական եկեղեցիների հուշամատյաններից պահպանված նյութերը։ Այսպես, օրինակ, Ավետման եկեղեցու շինարարության համար ընտրված հանձնաժողովը, որի կազմում եղել են երեք կամենիցահայեր, հանգանակություն է կատարում համայնքում «ի մեծամեծաց և ի փոքունց», որոնք վճարում են՝ «Ոմն շատ և ոմն սակաւ ըստ չափու կարողութեան իւրեանց»։ Ոմանք վճարելու ոչինչ չեն ունենում և ստիպված են լինում փոխարենը աշխատելու շինարարության վրա։ Այս դեպքում ևս զգացնել է տալիս ունեցվածքային տարբերությունը. որոշ մասը միայն ֆիզիկական ուժ է ներդնում, իսկ ուրիշները գալիս են սայլերով ու ձիերով. «Ոմանքն աշխատեցան անձամբ իւրեանց, և ոմանքն ձիաներով և սայլիւ քարինս, և կիրս, և աւազս կրելով»[6]։

Առանձնապես ծանր էր լինում նոր գաղթած մարդկանց վիճակը։ Հեռավոր ուղևորություններից հետո նրանք հայտնվում էին իրենց համար միանգամայն օտար միջավայրում, նրանց առջև ծառանում էին բազում դժվարություններ և բոլորը չէ, որ կարողանում էին հարմարվել նոր պայմաններին։ XVII դարի սկզբներին Յազլովեցում հաստատված Ղազար եպիսկոպոս Թոխաթեցին իր բանաստեղծություններից մեկի սկզբում գրում է նաև այն դժվարությունների մասին, որ իրենք ունեցել են այդ քաղաքում։ Երևում է, որ հայերի համար դժվար է եղել զբաղմունք գտնել ու ապրուստի միջոցներ վաստակելը, որովհետև «Չի կար փեշա եւ գործարան».

Կենամք բաղամ գիւղանրման
Քսան տուն կայ ժողովրդեան...
Անմրխիթար եմք տրխուական,
Չի կար փեշա եւ գործարան.
Մնացամ պարապ եւ առանց բան՛։

1747 թ. լեհահայոց արքեպիսկոպոս Հ. Ավգուստինովիչի հանձնարարությամբ հայ գաղթականների վիճակին ծանոթանալու համար Ռաշկով մեկնած Օգսենտ վարդապետը այնտեղի հայերին գտնում է ծանր պայմաններում։ «Կարի արտասուեցայ ի վերայ խեղճութեան նոցին»,— գրում է նա հետագայում։ Նրա միջնորդությամբ Յուզեֆ Լյուբոմիրսկին 1751 թ. մարտի 19-ին Ռաշկովի հայերին տալիս է մի շարք արտոնություններ[8]։

---

5 Ղ. Ալիշան. Կամենից, Վենետիկ. 1896, էջ 221։
6 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 152—153։
7 Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 207։
8 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 175։

Դժբախտաբար, մեզ հայտնի չեն հարկացուցակներ և դժվար է որոշակի բան ասել այն բոլոր հարկերի ու տուրքերի մասին, որ տալիս էր բնակչությունը քաղաքի տերերին։ Հայերին տրված արտոնագրերի մեջ երբեմն հիշատակվում է այն հանգամանքը, որ գաղթականների համար թեթևացվում են հարկերը կամ նրանք մի քանի տարով ընդհանրապես ազատվում են բոլոր տուրքերից։ Թագավորները կամ մագնատներն այդ քայլին դիմում էին միայն այն դեպքում, երբ արշավանքների պատճառով բնակչությունը լիովին կամ մասամբ զրկված լինելով իր ունեցվածքից, ստիպված էր լինում փախչել անտառները կամ անմատչելի այլ վայրեր։ Եվ բնակչությանը նոր բերելու համար քաղաքատերերը ստիպված էին լինում զիջումների դիմել։ Միևնույն է նրանք ոչինչ չէին կարող ստանալ արդեն ընչազուրկ դարձած այդ մարդկանցից։ Բայց երբ վերջիններս կրկին հաստատվում էին իրենց նախկին բնակավայրերում կամ նոր հիմնված քաղաքներում և աստիճանաբար կարողանում էին ինչ-որ չափով կարգի բերել իրենց տնտեսությունը, հարկերի կրճատման ժամկետները ևս սղվում էին և նրանք դարձյալ ընկնում էին ֆեոդալական ծանր շահագործման ու ճնշման տակ։

Հայ բնակչությունից գանձված հարկերի վերաբերյալ որոշ պատկերացում կարելի է ստանալ Ռաշկովի հայերին տրված լեհ իշխան Յուզեֆ Լյուբոմիրսկու արտոնագրից։ Այնտեղ ուղղակի ասվում է, որ լեհերի հետ հավասարապես հայերը մասնակցելու են քաղաքի համար կատարվող ամեն տեսակի ծախսերին՝ «Այս Հայ ազգս լիցի մասնակից ամենայն կելուրից քաղքին, պարապար Լէհ ազգին հետ»[9]։ Այս բանն իրագործելու համար հայերն իրենց միջից ընտրելու են մի «խելօք վերակացու ամէն նոր տարի երդվընցած, որ զայնպիսի կելուրն ժողվէ և խարճէ ըստ կամաց իրեանց Ուրէնտին»[10]։ Այսինքն քաղաքի կարիքների համար հայ բնակչությունից հարկեր հավաքելու գործը հանձնարարվում էր հայերի միջից ընտրված անձնավորությանը, որի ձեռքում լինելու էր համայնքի ղեկավարությունը, այլ կերպ ասած, դա լինելու էր վոյթը։ Լյուբոմիրսկին հայերին ազատել էր մի շարք հարկերից, բայց կարգադրել էր, որ «միջոցից հախն պիտան արէնտայիս այնպէս ինչպէս կուտայ Լէհ ազգն», իսկ 8-րդ կանոնով որոշված էր, որ «Զինչն Պատնական պի տայ Հայազգս ամէն տարի. Պազրի միջին տանդլօխ մէկ մաճառ ոսկի, և միւս սօխախնուն տանդլօխ կէս մաճառ ոսկի»[11]։ Զոլոշևում ևս շուկայում եղած տների (հետևապես և խանութների) վրա հարկը (18 զլոտի) երկու անգամ շատ էր փողոցների վրա գտնված տներից հավաքվող հարկից։ Այդ բանը գրանցված է Յան Սոբեսկու 1688 թ. հրովարտակում։ Նշված է նաև, որ հայերն իրենց արտադրած խմիչքների մի մասը հանձնելու են քաղաքի տիրոջը[12]։ Չի հիշված քանակը, ըստ երևույթին այդ մասին պայմանավորվում էին առանձին։

Քանի որ իրենց իրավունքներով հայերը հավասարեցված էին լեհ, ինչպես և ուկրաինացի բնակչությանը, ապա պարտականություններն էլ նույնպիսին

---

9 Մ. Բ ժ շ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 166։

10 Նույն տեղում։ «Ուրէնտ»-ի բացատրությունը տրված է Օդսենտի կանոններում «Ի՞նչ է Ուրէնտն» վերնագրի տակ։ Նա գրում է, որ դա քաղաքի տիրոջ կողմից վոյթին ու դատավորներին տրված իշխանությունն է (նույն տեղում, էջ 169)։

11 Նույն տեղում, էջ 166։

12 Lucja Charewiczowa, Dzieje miasta Złoczowa, Złoczów, 1929, էջ 37։

էին, ուստի և հայերը բոլորի հետ հավասարապես մասնակցել են քաղաքային ամրությունների շինարարությանը և բոլոր կարգի ռազմական ծախսերին։ Օրինակ, Սիգիզմունդ I թագավորի 1519 թ. մայիսի 22-ի հրովարտակի համաձայն Կամենեց-Պոդոլսկի ուկրաինացի, լեհ և հայ բնակիչներից գանձվում էր մի հատուկ հարկ՝ «սոշ» անունով, որը քաղաքի ստարոստայի գիտությամբ օգտագործվում էր Կամենիցի ամրացման և բերդի ամրությունների նորոգման համար[13]։ Կամենիցյան տարեգրության հեղինակ Հովհաննեսը գրում է, որ երբ 1567 թ. Կամենիցի դատավորները սկսում են պարսպի շինարարությունը, ապա քաղաքացիներին ևս ստիպում են աշխատել. «Թվ. ՌԺԶ (1567) Ֆռանգի դատաւորքն սկսան քաղքի բոլորն քարէ պարիսպ շինելոյ, բայց բազմաց հաճոյ չթվեցաւ. քանզի մեծ և ծանր գործ սկսան. և զի զքաղաքացիսն յոյժ նեղելով բանեցնէին. և նոքա անմռունչ յոգւոց հանելով գործէին զգործն զայն. և էին ի մէջ գերութեան իբրեւ զԻսրայելացիսն առ Փարաւոնիւն երբեմն»[14]։ Ռազմատուգանք վճարելիս հայերը ևս տալիս էին իրենց բաժինը։ Պատերազմների, արշավանքների ժամանակ նրանք էլ պարտավոր էին իրենց բնակավայրերում կանգ առած զինվորներին ու սպաներին ապահովել բնակատեղիով ու երբեմն էլ սննդամթերքով։ Լեհ թագավորներից ու իշխաններից արտոնություններ ստանալը ևս ամեն անգամ կապված էր մեծամեծ ծախսերի հետ։ Պատվիրակությունների ֆինանսավորման ու տրվող նվերների հոգսը նույնպես ընկնում էր համայնքների անդամների վրա։

Բնակչության վիճակը չափազանց ծանրանում էր պատերազմների ժամանակ։ Թուրք-թաթարական հրոսակների պարբերաբար կատարվող հարձակումների ժամանակ թալանվում էին նաև հայերը, նրանցից ոմանք գերի էին տարվում և ապա թանկ գներով վաճառվում իրենց հարազատներին, իսկ 1672—1699 թթ., երբ Պոդոլյան երկիրը գրավվեց թուրքերի կողմից, հազարավոր հայեր, լքելով իրենց անշարժ ունեցվածքը, ստիպված եղան փախչել Գալիցիա, Վոլին և այլ վայրեր։ Երբ նրանց մի մասը կրկին ետ վերադարձավ, ամեն ինչ արդեն քանդված, ավերված էր։

Բնակչությանը մեծ չարիքներ էին հասցնում բնական արհավիրքները՝ ջրհեղեղները, երկրաշարժերն ու երաշտը, ինչպես նաև հրդեհները։ Օրինակ, 1602 թ. մեծ հրդեհի ժամանակ Կամենիցը համարյա ամբողջությամբ կրակի ճարակ դարձավ։ Որպես հետևանք այդ ամենի լինում էր թանկություն ու սով։ Կամենիցյան տարեգրությունից իմանում ենք, որ 1590 թ. երաշտի պատճառով «մեծ սով և թանկութիւն եղաւ. զի ցորենոյ կապիճ տասն մաճրի (ոսկի) եղաւ, և սուլուն՝ 8 մաճրի, և տուկուն՝ 10 մաճրի, և կորեկն՝ 8 մաճրի, և ուվուսն՝ 4 մաճրի. զոր բնաւ տեսեալ չէր և ոչ լուեալ»[15]։

Ֆեոդալական աստիճանակարգի բարձր հորիզոնականի վրա էր գտնվում նաև եկեղեցին, և հոգևոր դասը ձգտում էր ետ չմնալ աշխարհիկ հարկահաններից։ Հայ բնակչությունը պարտավոր էր հոգ տանել թե՛ տեղական եկեղեցականների և թե՛ էջմիածնից, Երուսաղեմից ու Կ. Պոլսից եկած նվիրակների մա-

---

13 «Архив Юго-западной России», ч. IV, т. I, Киев, 1869, էջ 34—35։

14 Ալիշան, Կամենից, էջ 38։

15 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 57։

սին։ Օդսենտ վարդապետի բացատրագրում թվարկված են եկեղեցուն տրվող տուրքերը։ Նախ ասվում է, որ ավագ քանձապետը եկեղեցու կարիքները հոգալու համար պարտավոր է «տան և տուկեան գլօխ փարայ ժողովելով ամէն կիրակմուտքին», հանձնել այն «Տէր Բրօպօշչին»՝ ծխական քահանային, իսկ եկեղեցու քանձապետը (սրանք տարբեր պաշտոններ էին) պետք է ժողովի «զՀայոց Ուրէնտի Տէքրէթնուն Ճուրումներն... Ջրօրհնեաց խաչհանելիս, ծաղկազարդին դոնաբացանքից. Զատկին լուսաբերից. Պսակնուն, Թաղմանից, Բանահէրից, Սալեամրթից և այլ շարշովում»[16]։

«Վասն ժամատիրութեան և քահանու կելուրին» վերնագիրը կրող կանոնով որոշվում են այն գումարները, որ հավատացյալ ժողովուրդը տալու էր եկեղեցուն ու նրա սպասավորներին։ Բերենք այստեղ այն տվյալները, որոնք վերաբերում են քահանաների գանձած գումարներին. «Եւ սովորական կէլուրն քահանու այսպէս լինի,— կարդում ենք այնտեղ,— ժամուց դրամն կէս խուրուշ. Քրիստոսի ծննդեան և սուրբ զատկութեան դանօրհնելչէք ի Տօլվաթաւորաց Ա(1) խուրուշ. մէջձեռաց կէս խուրուշ. ի րէնճբէրից Ա բուպ. ի ջուրօրհնելոյ մանկաբերացն Ա(1) շուսդակ։ Կնունքից, կէս խուրուշ. տղաբերից քառսունվէլուն Ա(1) շուսդակ։ Հարսնախօսութեան նշան օրհնելչէք կէս խուրուշ. յերից ժամու մէջ պսակին ծանուցմանց կէս խուրուշ»։ Այնուհետև նշվում է ամուսնության, թաղման, գերեզման օրհնելու, պատարագ և այլ արարողություններ անելու արժեքը։ Բացի դրանից, տոների, հարսանիքների, թաղման, մատաղ տալու ժամանակ «ժողովուրդն խալաճ, և կերակուր, և ըմպելիք իրեանց տներուն կու խրկէն քահանու և աղքատացն»[17]։

Այն ժամանակ, երբ գաղութներում եղած «ֆախիրներն» ու «անճարակներն» իրենց հույսը դրել էին պատահական վաստակի և կամ «աղքատաց տընտեսների» ողորմածության վրա, մեծատուն դրամատերերը գտնվում էին շքեղ պայմաններում և իրենց կենցաղով ոչինչով չէին տարբերվում լեհ արիստոկրատների ապրելակերպից։ Լեհական Ժողովրդական Հանրապետության Կրակով քաղաքի Չարտորիսկիների թանգարանի գրադարանում պահվում է Ստանիսլավ քաղաքի հայ գաղութի հարսանեկան պայմանագրերի մատյաններից մեկը, կազմված 1693—1784 թթ., որն այդ տեսակետից արժեքավոր նյութեր է պարունակում։ Ստանիսլավի գաղութը կազմված էր նաև Կամենիցից գաղթած հայերից, ուստի և այդ նյութերը հավասար չափով վերաբերում են նաև Կամենիցին ու պոդոլյան մյուս հայ գաղութներին։ Հարսանեկան այդ պայմանագրերը թույլ են տալիս գաղափար կազմելու լեհահայ վերնախավի ունեցվածքի, նյութական հնարավորությունների վերաբերյալ։ Հարսանեկան պայմանագրեր կարող էին կնքել միայն ունևոր դասի ներկայացուցիչները, որոնք իրենց ամուսնացող զավակների տրամադրության տակ են դրել մեծ գումարներ, հազարավոր զլոտիի արժողությամբ զարդեր։ Ծանոթանանք այդ պայմանագրերից մեկի հետ։

1726 թ. հունվարի 27-ին աղա Գրիգորենց Դոտերի դուստր՝ պանի Աննայի և պան Խասոյենց Մառուկի որդի պան Գասպարի ամուսնության կապակցությամբ աղջկա ծնողները հետևյալ օժիտն են դնում իրենց աղջկա հետ.

16 Մ. Բժշկյան, Նշվ. աշխ., էջ 170։
17 Նույն տեղում, էջ 177, 183։

«Ոսկեղէն՝

Մէկ լանցուխ ոսկու կարմրէ, որ նոր կու քաշէ էրտուն ոսգի կարմիր։

Մէկ նշանի մատնի հինգ օսկու կարմրէ։

Որեք կապ աղէգ մարգրիտ։

Մէկ գանակ օսգու ռուպիներով ու խոշոր մարգրտով զարդարած, որին վրա։ քսանվէրկու կտոր է։

Այս գանագին քով մէկ շտուգա մը օսգու մէջտեղը ռուպիներով շինած։

Մէկ ճուֆդ մը օսգու օղեր, շմառակտէ քարերով զարդարած, որ նոր կու քաշէ օխդը օսգի կարմիր.

Մէկ ճուֆդ գուլչիքներ ռուպիներով օսգու կարմրէ։

Մէկ կապ մը խոշոր գօրայլներ»։ Այնուհետև մեկ առ մեկ թվարկվում են աղջկա օժիտի մեջ մտնող զգեստները, որոնք դարձյալ շատ թանկարժեք են և նրանց մեջ կան ոսկով զարդարված շորեր՝ «Մէկ ճուֆդ մը հագուստ ռուժօվի ատամասգէ օսգու բօդրշէպաներով... Մէկ ուտէնկէրգայ օսգու ծաղիկներով»։ «Ճէրմակեղէն ու տօշկեղէն» վերնագրի տակ ոչինչ չի թվարկված. ասվում է միայն «Ընչպէս որ յամէն տօլվաթաւոր իրեն գաւկին կու տան, նոյնպէս և բան Աղայ Դօտերն հետ իւր տանտիկնոջը իրենց սիրելի դստերը խոստացան տալու, և այլ աւելի աստուծոյ և ծնողական օրհնութիւն»[18]։

Իսկ ի՞նչ նվերներ էր տալիս փեսան իր ապագա կնոջը։ Այդ մասին գրված է օժիտի մեջ մտնող իրերի թվարկումից անմիջապես հետո. «Նմանապէս վերոգրեալ բան Ծառուկն Խասօյին և իւր որդին բան Անդսէնտն (փեսայի եղբայրը— Վ. Ռ.), վերոգրած ՃՀէգին դիմաց խոստացան ու գրեցին իւրեանց սիրելի հարսինը բաննայ Աննային երեսջուր հարուր օսգի կարմիր։ Պաշիայ մէկ ճուֆդ մը, մանէլայ էրսունը վեց օսգու կարմրէ և այլ աւելի աստուծոյ ու ծնողական օրհնութիւնն»։ Հետո բերված են պայմանավորվող կողմերի ու վկաների ստորագրությունները[19]։

Հայ մեծատունները շքեղորեն էին կատարում հարսանյաց հանդեսները։ Անգամ XVII դարի վերջում, երբ նրանք նախկին արտոնությունները չունեին այլևս և երբ, ընդհանրապես, նկատվում էր լեհական քաղաքային կյանքի նշանակալի անկում, հայ հարուստները շարունակում էին պճնվել այնպես, որ մի անգամ 1682 թ. լեհական իշխանությունները նույնիսկ դատ բացեցին նրանց դեմ։ Դատի տրվածները երկուսն էին՝ լվովցի հայ Իվան (Յան) Յաշկևիչը, որը մեծ շքեղությամբ էր տոնել իր աղջկա հարսանիքը, և փեսան՝ կամենիցացի հայ Բորբիկովիչը, որը պսակի ժամանակ շատ թանկագին ու չափազանց շքեղ զգեստներ էր հագել.

«Իվան Յաշկևիչը,— ասում է Լվովի քաղաքային դատախազ Ստանիսլավ Կարկովսկին դատական նիստի ժամանակ,— թույլ է տալիս իր կնոջ, ինչպես և իր հարսնացու աղջկան հագնվել ավելի ճոխ, քան արտոնում էր քաղաքում իր ունեցած դիրքը։ Նրանց զգեստները բոլորը ոսկեհյուս էին և շքեղ։ Երբ երիտասարդ աղջիկը պսակի էր գնում, Լվովի ազգաբնակչության մեծ մասը հավաքվել էր հայոց փողոցը հիանալու այդ հարսանիքով և ամենքը տեսնում

---

18 Bibljoteka muzeum X. X. Czartoryskich w Krakowie, r. 3543, էջ 111ա—111բ։

19 Նույն տեղում։

էին, որ աղջիկը հագնված էր մի այնպիսի տարազով զգեստ, որ հագնում էին վերջերս մեծատոնների և թագավորի շքախմբի կանայք։ Ինչպես որ վերջիններս (նրանք) իրենց գլխին փակցնում էին ջայլամի փետուրներ։ Նրանց պսակի զգեստները ոսկեհյուս էին, և թե ինչ կարժենային, երևում է նրանից, որ միայն տակի շրջազգեստը արժեր 1200 զլոտի և նույնիսկ, ամոթ է ասել,— թող ներողամիտ լինի դատարանը,— նրա գուլպաները և ասեղնագործած կոշիկները արժեին մոտ 200 զլոտի։ Եթե հաշվելու լիննենք այն բոլոր զգեստներն ու իրերը, որ կար տիկին Յաշկևիչի և օրիորդի վրա, գլխից մինչև ոտք, ամենաթանկագինից մինչև ամենաչնչին իրը, ապա նույնիսկ դժվար է երևակայել, թե որքան կարժենային դրանք։

Ինքը՝ փեսան, Բոբրիկևիչը, բացի մյուս զգեստներից, պսակ է գնում հագած մի բաճկոն, որ սամույրով, ոսկե կոճակներով ու թանկագին քարերով էր զարդարված։ Իսկ երբ սկսվում են պարերը, նա ոչ այնքան թեթևության, որքան վայելչագեղության համար հագնում է մի ուրիշ բաճկոն՝ հոլանդական կերպասից, ոսկեհյուս աստառով։ Եվ նույնիսկ նրա կոշիկները,— թող թույլ տրվի ինձ հայտնելու— ի մեծ զարմանս դիտողների, ոսկեհյուս էին։ Իսկ երբ գործը հասնում է քաղաքային տուրքեր վճարելուն, նույն պան Յաշկևիչը աշխատում է վճարել այնքան, որքան մի խղճուկ քաղաքացի»[20]։

Իսկ աշխատավոր բնակչությունն ապրում էր ծանր պայմաններում, զուրկ էր կենցաղային տարրական հարմարություններից և այս պատճառով այդ վայրերում հաճախ սկսվում էին համաճարակներ, որոնք մեծ զոհեր էին խլում նախ և առաջ չունևորներից։ Ճիշտ նույն պայմաններում էին գտնվում նաև Պոդոլյեի քաղաքների ուկրաինացի ու լեհ աշխատավորները։ Ուստի Պոդոլյեի բնակավայրերում սրված էին դասակարգային ներհակությունները և պայքարը։ Այդ պայքարն ընդունում էր տարբեր ձևեր ու երանգներ։ Աշխատավոր մարդիկ երբեմն հարկադրված էին լինում լքել իրենց բնակավայրը և կյանքի քիչ թե շատ ապահով պայմաններ որոնել այլ վայրերում։ Այսպես, դեռ նախքան թուրքերի հարձակումը Կամենիցից շատ հայեր պարբերաբար հեռանում էին Լվով ու այլ քաղաքներ, Յազլովեցից անցնում էին Վոլին, իսկ երբ սկսեց զարգանալ Մոգիլյով-Պոդոլսկը, հազարավոր հայեր այնտեղ գաղթեցին նաև պոդոլյան կենտրոններից։ Կյանքի ծանր պայմանները, քաղաքային իշխանությունների գնալով ուժեղացող հալածանքները ստիպում էին հայերին բողոքներ ներկայացնել կենտրոնական իշխանությանը։ Այդ բողոքները երբեմն ընթացք էին ստանում և վերևից կարգադրություն էր գալիս մեղմելու ճնշումները։ Այսպես, Ավգուստ I թագավորը 1725 թ. դեկտեմբերի 12-ին Կամենիցի քաղաքային իշխանությանը կարգադրում է թեթևացնել ճնշումները բնակչության նկատմամբ[21]։ Բայց ձևական բնույթ կրող այդ հրամանները չէին կենսագործվում և դրությունը մնում էր նույնը։ Բնակիչներն իրենց դժգոհությունն

---

20 «Կամենեց-Պոդոլսկ բաղարի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դար)», աշխատասիրությամբ Վ. Ռ. Գրիգորյանի, Երևան, 1963, էջ 80։

21 Моисей Доронович, Армяне в Подолии и первая церковь их в городе Каменце, ныне градская церковь православная во имя святителя Николая, «Труды Комитета для историко-статистического описания Подольской епархии», вып. II, Каменец-Подольск, 1878—1879, էջ 314—315։

արտահայտում էին հարկերից խուսափելով։ 1742 թ. Կամենիցի վիճակին ծանոթացող հանձնաժողովն արձանագրել է, որ հայ համայնքը հրաժարվում է վճարել հարկերը։ Նույն բանն է արձանագրված նաև հինգ տարի անց՝ 1747 թ. օգոստոսին կազմված մեկ այլ վավերագրում[22]։

Պոդոլյան գաղութներում ստեղծագործած հեղինակների մի մասը սոցիալական գրությամբ ավելի մոտ էր կանգնած ունևոր դասին, ուստի իր գործերում լռություն է պահպանում այդ պայքարի մասին։ Նրանցից ոմանք, օրինակ, թշնամաբար են արտահայտվել ուկրաինական ժողովրդի մղած ազատագրական պայքարի ու նրա ղեկավար Բոգդան Խմելնիցկու մասին, բայց աշխատավոր ժողովրդի համակրանքն ամբողջությամբ եղել է այդ պայքարի ու նրա անձնվեր մարտիկների կողմը և դրա պատճառով Կամենիցի քաղաքային իշխանությունները հավասար կասկածանքով են վարվել նաև հայերի հետ[23]։

Դասակարգային հակամարտությունները սուր բնույթ էին ընդունել համքարություններում։ Ենթավարպետներն ու աշակերտները, որոնք արհեստավորական կազմակերպություններում զգալի թիվ էին կազմում, տնտեսապես հարստահարվում էին վարպետների կողմից։ Ղեկավարությունը գտնվում էր վերջիններիս ձեռքում և, բնականաբար, բոլոր կարգի հարցերում ու նախ և առաջ արտադրությունը կազմակերպելու, հետևապես և եկամուտները ստանալու գործում նրանք ելնում էին իրենց շահերից։ Միաժամանակ ամեն կերպ աշխատում էին արգելք հանդիսանալ վարպետների թվի ավելացմանը։

Վարպետների ու համքարությունների մեջ մտնող մյուս անձանց միջև առկա խոր հակասությունները նկատվել են նաև Ռեչ Պոսպոլիտայի տարածքում գործած մյուս արհեստավորական կազմակերպություններում, ուստի սկսած XVI դարից աշակերտներն ու ենթավարպետները, ինչպես և առևտրի ասպարեզում գործած ստորին ծառայողներն իրենց շահերը պաշտպանելու համար ստեղծում էին հատուկ կազմակերպություններ, որոնք ղեկավարում էին նրանց պայքարը հանուն բանվորական օրվա կրճատման ու աշխատավարձի բարձրացման։ Շահագործող վարպետների դեմ ենթավարպետների պայքարի ձևերից են եղել նաև գործադուլները, որոնք սկսվելով XVI դարում, շարունակվել են հետագա ժամանակներում[24]։

Պոդոլյեում և ընդհանրապես Ռեչ Պոսպոլիտայի այլ մասերում ապրող հայերի համար XVII դարի մի քանի տասնամյակները ծանր փորձությունների և հուսահատ պայքարի տարիներ էին։ Այդ ժամանակ լեհահայ կենտրոններում սկսվեց բռնի կաթոլիկացումը, որը նպաստավոր հող ստեղծեց հետագա ապազգայնացման, հայրենի մշակույթից կտրվելու համար։ Կաթոլիկ եկեղեցու հետ միավորումը արագացրեց հայերի լեհացման գործը։

Հարկ է նշել, որ լեհահայոց կաթոլիկացման ժամանակ ծայրամասերի գաղութներում, մասնավորապես Պոդոլյեի հայաշատ կենտրոններում ծավալված իրադարձությունների վերաբերյալ մեր ունեցած նյութերը, ցավոք, այն-

22 Նույն տեղում, էջ 329—346։

23 Л. С. Хачикян, Армянские колония на Украине в XVI—XVII вв., «Великая дружба», сборник посвященный 300-летию воссоединения Украины с Россией. Ереван, 1954, էջ 211—212։

24 «История Польши», т. I, М. 1954, էջ 275։

քան էլ շատ չեն։ Այդ կարգի սկզբնաղբյուրները գլխավորապես նվիրված են Լվովին, որտեղ տեղի էին ունենում հիմնական դեպքերը։ Մինչդեռ մյուս գաղութներում ևս հայ բնակչությունը պայքարել է բռնի կաթոլիկացման նախաձեռնողների ու կիրառողների դեմ։ Այդ պայքարն ամենևին էլ չէր սահմանափակվում կրոնական շրջանակներում, այն մղվում էր նաև ազգային ինքնատիպ դեմքը պահպանելու, հեռավոր հայրենիքի հետ կապերը չխզելու, ազգային մշակույթից չհրաժարվելու նշանաբանով։ Չպետք է անտես անել նաև հարցի սոցիալական կողմը։ Կրոնափոխությունը ձեռնտու էր նախ և առաջ հասարակության ունևոր շերտերին, որոնք դրանով իսկ հնարավորություն էին ստանում ավելի մոտ կանգնելու տիրապետող վերնախավին, օգտվելու այդ վիճակի բոլոր առավելություններից և ապահովագրելու իրենց կրոնական տարբերության պատճառով հնարավոր բոլոր կարգի անախորժություններից։ Սրանց ձգտումները միանգամայն հակառակ էին կաթոլիկության ընդունման դեմ պայքարող աշխատավոր մարդկանց ցանկություններին և այդ հակամարտությունը փաստորեն վեր էր ածվել նաև սոցիալական տարբեր աստիճանների վրա գտնվող մարդկանց պայքարի, դասակարգային պայքարի։ Ֆրիդրիխ Էնգելսը գրել է. «Ֆեոդալիզմի դեմ մղվող ամեն մի պայքար այն ժամանակ պետք է կրոնական զգեստավորում ընդուներ, ամենից առաջ եկեղեցու դեմ ուղղվեր»[25]։

Պետք է ասել, որ ունևորներից բոլորը չէ, որ գնում էին կրոնափոխություն քարոզողների ետևից։ Քաջ գիտակցելով կաթոլիկ եկեղեցու հետ միության կործանարար դերը ընդարձակ այդ պետության սահմաններում հյուրընկալված փոքրաթիվ հայ բնակչության համար, նրանցից ոմանք ընդգրկվել էին միության դեմ պայքարողների շարքերը։ Սակայն ուժերն անհավասար էին. ճիզվիտ կրոնափոխողների ու նրանց հայ գործակիցների ետևում կանգնած էին կաթոլիկ եկեղեցու ազդեցիկ ու ամենակարող պարագլուխները, ինչպես և կրոնական անհանդուրժողականությամբ տառապող պետական մեծ ու փոքր գործիչները։ Ի վերջո միության հակառակորդները ստիպված էին տեղի տալ կամ հեռանալ այլ երկրներ։

Անհրաժեշտ է նշել, որ համայնքի անդամների հասարակական դիրքն ուղղակի կախում ուներ նրանց ունեցվածքային վիճակից։ Ինքնավարությունն իրագործող մարմինների ղեկավարման գործը կենտրոնացված էր ունևոր խավի ներկայացուցիչների ձեռքում։ Վոյթի պաշտոնում ընտրվել կարող էր միայն պատշաճ հարստություն ունեցող անձը։ Դա վերաբերում էր նաև դատավորներին և «Քառասուն աղբարների» խորհրդի անդամներին։ Յաղլովեցի «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրության սկզբում հականե հանվանե թվարկված են գաղութի ղեկավար մի շարք անձինք՝ վոյթ, վոյեվոդ, մարշալեք, երեցփոխան, ավագներ, բայց դրանք բոլորը պաներ, պարոններ ու աղաներ են։ Եղբայրությունների ղեկավարները՝ մանկտավագները ու ավագները նույնպես եղել են ունևոր դասի ներկայացուցիչներ, ուստի ընդգրկվել են դատարանի կազմում։

Գաղութների բնակչությունը ձևականորեն իրավունք ուներ մասնակցելու դատավորների ընտրությանը, բայց փաստորեն այդ իրավունքից օգտվում էին

25 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. 2, Երևան, 1950, էջ 123։

միայն մի քանի տասնյակ ընտրյալներ։ Թե ինչպես էին տեղի ունենում ընտրությունները, կարելի է իմանալ Կամենիցի հայոց մագիստրատի «40 ընկերաց» 1634 թ. դեկտեմբերի 7-ին կազմած մի փաստաթղթից, որը սահմանում էր ընտրության կարգը և որը հաստատված էր Լեհաստանի Վլադիսլավ IV թագավորի կողմից 1635 թ. մարտի 22-ին[26]։ Այդ որոշման համաձայն վոյթի ընտրությունը կայանալու էր ամեն տարի ս. Մատթեոսի տոնի նախօրյակին։ Ընտրողներն էին «40 ընկերտիք»-ն իրենց մարշալի գլխավորությամբ և 50 ներկայացուցիչներ՝ հասարակ ժողովրդից, որոնց (ընտրություններից 2—3 օր առաջ) ընտրելու էին «40 ընկերտիք»-ն ու իրենց մարշալը՝ համայնքի «բարի, ազնիվ և հիմնովին մշտաբնակ» անդամների շարքից, պայմանով, սակայն, որ նրանք «լավ հագնված լինեն»[27]։ Ոչ մշտաբնակները, այսինքն քաղաքացու կոչում չունեցողները, ընտրություններին մասնակցելու իրավունք չունեին։ Իսկ քաղաքացու կոչում կարելի էր ստանալ մշտական զբաղմունք և մի որոշ կարողություն ունենալու դեպքում միայն։ Ինչ վերաբերում է «բարի և ազնիվ» ու «լավ հագնված» մարդկանց, ապա այս բառերի տակ պետք է հասկանալ ունևոր իմաստը։ Ինչպես երևում է, ընտրություններին մասնակցելու համար անհրաժեշտ է եղել ապահովել գույքային որոշակի ցենզ։

Ընտրություններից առաջ այդ 50 ներկայացուցիչների ցուցակը ներկայացվում էր վոյթին ու մագիստրատի անդամներին։ Պարզ է, որ վերջիններս կաշխատեին ցուցակում թողնել միայն իրենց հավատարիմ ու վստահելի մարդկանց անունները։ Վոյթին ու մագիստրատի անդամներին իրավունք էր վերապահվում նախքան ընտրություններն իրենց մոտ կանչել ու զրույց ունենալ այդ մարդկանց հետ։ Երբ վոյթը, ասվում է որոշման մեջ, այդ մարդկանց ուղարկեր ընտրության, նրանք պետք է պահեին իրենց ամենահամեստ և վայելուչ կերպով։ Այլ կերպ ասած, հնազանդվեին նրա կարգադրություններին։

Վերը շարադրվածից երևում է, որ Պոդոլյեի հայ գաղութներում ինքնավարությունն իրականացնող մարմնի՝ հայոց մագիստրատի ղեկավարության մեջ կարող էին ընտրվել միայն ունևոր խավի ներկայացուցիչները, ու թեև վոյթի ընտրությանը մասնակցում էին նաև «հասարակ ժողովրդից» 50 ներկայացուցիչներ, բայց նրանք միայն ընտրել կարող էին և ոչ ընտրվել։ Ուրեմն գաղութների աշխատավորական խավը վաստորեն զուրկ էր ընտրական իրավունքից և գոյություն ուներ «դեմոկրատիա ընչին փոքրամասնության համար, դեմոկրատիա հարուստների համար»[28]։

Համայնքի անդամներին իրավունք էր վերապահված իրենց շահերը պաշտպանելու համար դիմել դատարան կամ էլ վերջինիս որոշումից դժգոհ լինելու դեպքում վերադատության գանգատ ներկայացնել թագավորին կամ քաղաքի տիրոջը։ Քրեական ու քաղաքացիական գործերը ձրի չէին լսվում, հայցվորները պարտավոր էին դատական հարկ՝ «բամեդնիյ» վճարել։ Այս հանգամանքն, անշուշտ, աղքատներին զրկում էր դատարանի պաշտպանությունից օգտվելու հնարավորությունից։ Բացի այդ, իր ողջ կազմով դատարանն արտահայտում էր տիրող վերնախավի շահերը և պարզ է, որ չունևոր մարդիկ հազիվ

---

26 «Архив Юго-западной России», ч. V. Акты о городах (1432—1798), т. I. Киев, 1869, էջ 150—152։

27 Նույն տեղում։

28 Վ. Ի. Լենին, Պետություն և ռևոլյուցիա, Երկեր, հատ. 25, Երևան, 1951, էջ 599։

թե կարողանային արդարության հասնել «տօլվաթաւորների» հետ ունեցած իրենց վեճերում։

Քաղաքացիներին իրավունք էր տրված նաև երաշխավորությամբ բանտից մարդ դուրս հանել, բայց սա ևս կախում ուներ երաշխավորողի ունեցվածքային վիճակից։

Համայնքի անդամները կարող էին մտնել համքարական կազմակերպության մեջ կամ դառնալ կտրիճների ու հոգևոր եղբայրությունների անդամ, բայց բոլոր դեպքերում էլ պարտադիր էին ինչպես մուտքի վարձը, այնպես էլ անդամավճարները։

Պոդոլյան երկրի տիրակալներից հայերը ստացել էին բազմաթիվ արտոնություններ։ Նրանք կարող էին տուն և հողամաս (յուրդ) գնել, տուն և խանութներ կառուցել, զբաղվել առևտրով, առևտրական նպատակներով մեկնել արտասահմանյան երկրներ, մասնակցել տոնավաճառներին։ Նրանց թույլ էր տրված հաց թխել, գարեջուր և զանազան խմիչքներ արտադրել ու վաճառքի հանել, անասուններ բտել, զբաղվել կաշվի մշակմամբ և այլն։ Հայերը կարող էին մտնել պետական ծառայության մեջ, նրանց ձեռքում էր գտնվում թարգմանների կարևոր և եկամտաբեր պաշտոնը, նրանցից շատերը դարձել էին մաքսատան աշխատողներ, իսկ ավելի ձեռնհասները դիվանագիտական աշխատանք էին կատարում լեհ թագավորի արքունիքում։ Կարևոր էր նաև այն, որ լեհ մագնատները իրավունք չունեին հայերին ստիպել մնալ որևէ վայրում, նրանք ուզած պահին կարող էին հեռանալ՝ վճարելով այդ բանի համար սահմանված տուրքը[29]։

Պոդոլյեի հայ գաղութների ներքին կյանքի պատկերն ամբողջացնելու համար անհրաժեշտ է կանգ առնել նաև կանանց վերապահված դերի, նրանց իրավական վիճակի հարցերի վրա։ Սկզբից ևեթ նշենք, որ այդ հարցերի շուրջ արժեքավոր տեղեկություններ կարելի է գտնել «Լեհահայոց դատաստանագրքում» և Կամենիցի դատական արձանագրություններում։ Այլ նյութերի հետ մեկտեղ, նրանք հնարավորություն են ընձեռում որոշելու կնոջ դերը հայ համայնքի կյանքում, ծանոթանալու նրա իրավական վիճակին։

Պոդոլյան հայ գաղութներում կանայք մասնակցություն են ունեցել արհեստների որոշ ճյուղերի զարգացմանը։ Կամենիցում, Յազլովեցում, Ռաշկովում և պոդոլյան այլ քաղաքներում հայերը հայտնի էին որպես գորգերի, կարպետների, վարագույրների, գոտիների, մուշտակների և կաշվե մի շարք առարկաների արտադրողներ։ Բնական է, որ այդ աշխատանքներում ակտիվ դեր են խաղացել նախ և առաջ կանայք։ Պոդոլյան հայերը բազմաթիվ խանութներ ունեին և որոշ վայրերում շուկաները համարյա ամբողջությամբ գտնվում էին նրանց ձեռքում։ Խանութները մեծ մասամբ կից էին տներին և կանայք առ ու ծախի մեջ օգնում էին իրենց ամուսիններին։ Բացի դրանից, նրանցից ոմանք առևտրով զբաղվում էին ինքնուրույն կերպով և անկամ առևտրական նպատակներով մեկնում շրջակա քաղաքները, մասնակցում էին Լվովում, Յազլովեցում ու այլ վայրերում պարբերաբար կազմակերպվող տոնավաճառներին։ Եվ

29 Սահակ Թանդյան, Լեհահայերի մասին, «Արարատ», էջմիածին, 1902, մարտ—ապրիլ, էջ 285։

ահա, այդ հողի վրա կարիք էր լինում կնքել ու հաստատել զանազան պայմանագրեր, անխուսափելի էին լինում կորուստներն ու վեճերը, որոնք և բերում էին նրանց դատարան։ 1575 թ. սեպտեմբերի 28-ին Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարան է դիմում Զլթխի կին Ուլուխաթունը, որի վարձած սայլակի միջից, Կամենիցից Խոտին գնալու ճանապարհին, անհետացել էր 18 կանգուն կտավ։ Այդ կինը զբաղվում էր կտավի առևտրով[30]։ Մեկ ուրիշը՝ Խաչկոյի կինը, զբաղվում էր մետաքսի[31], իսկ Ջիքայի կին Նազուն՝ բրդի առևտրով[32]։

Կանայք կարող էին հանդես գալ դատարաններում և պաշտպանել իրենց իրավունքները։ Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, բայց սահմանափակվենք մեկով. Խոտինցի Ստեփանի կին Աննան գողացված իր զարդերի կապակցությամբ անձամբ դատ է հարուցում Կոստայի որդի Յագուբի դեմ։ Դատական այդ գործը տևում է շուրջ մեկ ամիս և ավարտվում Աննայի օգտին[33]։ Կանայք հանդես էին գալիս ոչ միայն որպես հայցվոր, այլև պատասխանող կողմ[34]։ Դատարանի որոշումից դժգոհ մնալու դեպքում կարող էին դիմել վճռաբեկ ատյանին[35]։ Նրանք իրավունք ունեին որպես երաշխավորող հանդես գալու պարտք վերցնող իրենց ամուսինների համար[36] և նույնիսկ տղամարդկանց հետ միասին կարող էին երաշխավորությամբ բանտից մարդ ազատել։ Այսպես, 1574 թ. նոյեմբերի 19-ին Կամենիցի հայոց դատարանը ոմն Շարովսկու ու նրա զոքանչի երաշխավորությամբ բանտից ազատ է արձակում Տրդատ անունով մի անձնավորության։ Փոխարենը Շարովսկին ու նրա զոքանչը գրավ են դնում իրենց ողջ ունեցվածքը[37]։

Այստեղ չի կարելի մոռանալ մի կարևոր հանգամանք, որ երբեմն բացակայում է արձանագրության ժլատ տողերում՝ գույքային ինչ-որ ցենզ, անտարակույս, կարգավորել է կանանց իրավունքների շրջանակները, նրանց իրավունքները պակասել կամ բազմապատկվել են ունեցվածքի, հարստության համեմատ։ Անկարելի է, որ չունևոր կանայք ևս այդչափ վստահություն վայելեին օրենքի պաշտպանների աչքում։

«Լեհահայոց դատաստանագրքի» № 116 («Ծնողների ունեցվածքը ժառանգելու մասին») հոդվածի համաձայն կանայք տղամարդկանց հետ հավասար իրավունքներ ունեին հայրական ժառանգության նկատմամբ։ Անկտակ մահացած մարդկանց գույքը հավասար չափով բաժանվում էր նրանց որդիների ու դուստրերի միջև։ Բայց երբ ուղղակի ժառանգներ չէին լինում, նախապատվությունը տրվում էր արական սեռին՝ ժառանգելու իրավունք էին ձեռք բերում մահացածի եղբայրն ու եղբոր զավակները, իսկ այդպիսիք չլինելու դեպքում միայն՝ քույրն ու նրա զավակները[38]։ Եղբայրները հորից մնացած ժառանգությունը բաժանելիս պարտավոր էին իրենց չամուսնացած քրոջը մաս

---

30 ЦГИА Украинской ССР, ф. 39, оп. 1, ед. хр. 8, էջ 85ա։
31 Նույն տեղում, էջ 46ա։
32 Նույն տեղում, էջ 59բ։
33 Նույն տեղում, էջ 54բ, 55ա և այլն։
34 Նույն տեղում, էջ 61բ։
35 Նույն տեղում, էջ 44ա։
36 Նույն տեղում, էջ 78ա։
37 Նույն տեղում, էջ 69ա։
38 Prawa y artikuły ormian lwowskich, „Biblioteka starożytna pisarzy polskich" t. I, Warszawa, 1843, էջ 128։

հատկացնել[39]։ Օժիտը մնում էր ամուսնացած կնոջ սեփականությունը, բայց ամուսնու խնամակալության ներքո[40]։ Վերջինս էլ իր կողմից օժիտի վրա նվերներ էր ավելացնում, ուստի ընտանիքի մեջ տղամարդու սեփականության կողքին մշտապես եղել է նաև կնոջ սեփականությունը և այդ երկուսը համատեղ կյանքում վաստակածի հետ միասին կազմել են «հայրական և մայրական գույք», որը հենց այդպես էլ անվանված է դատաստանագրքում[41]։

Կանանց իրավական վիճակի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն ամուսնությանը վերաբերող փաստաթղթերը։ Ամուսնությունը կամավոր էր և առանց կողմերի համաձայնության հոգևորականներն իրավունք չունեին իրականացնելու պսակի արարողությունը։ Ռաշկովի հայ գաղութի համար Օգսենտ վարդապետի գրած կանոնների համաձայն նախապես «կու հարցրնու քահանայն հարսին և փեսացուին, թէ կամաւորվեցան հարսնախօսութեան և իրուր ամուսնանալոյ», որից հետո միայն «լինի նշանտուք ատաթին գօրայ... և դնեն զժամանակն հարսանեաց»[42]։ Ինչպես տեսանք, կազմվում էր նաև հարսանեկան պայմանագիր, որտեղ գրանցվում էին հարսի օժիտն ու ստացած նվերները, բայց այդ բանը կարող էին անել միայն ունևորները։

Հարկ է նշել, որ լեհահայոց կանանց այդօրինակ իրավունքները նոր ձևը բերովի կամ էլ օտար ազդեցության արդյունք չէին։ Դեռևս մայր հայրենիքում հայ կանայք դարեր ի վեր ակտիվորեն մասնակցել են երկրի հասարակական-մշակութային կյանքին և տնտեսական գործերին։ Կինը ժառանգելու իրավունք ուներ, ազատ էր տնօրինելու հորենական տնից բերած արժեքները, ամուսնու հետ որոշ իրավունքներ ուներ նաև համատեղ կյանքի ընթացքում վաստակածի նկատմամբ։ Նրա այդ իրավունքները պաշտպանվում էին դարավոր սովորույթի, ինչպես և պատշաճ ձևով վավերացված օրենքների ուժով։ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» համաձայն հոր մահվան դեպքում, երբ չէին մնում արական սեռի ուղղակի ժառանգներ, գույքը ժառանգում էր չամուսնացած աղջիկը, իսկ ամուսնացած դուստրը ստանում էր կես բաժին, որովհետև ամուսնանալու ժամանակ նա արդեն ստացած էր լինում իր բաժինը։ Գոշը որոշակի ու պարզ սահմանում է. «Հաստատի ըստ այսմ որդւոց եւ դստերաց հաւասար լինել ժառանգութիւնն հօր, ըստ որում եւ Աստուած զոյգ ետ զժառանգութիւն արքայութեան արանց և կանանց»[43]։ Սահակ Պարթևի կանոնների համաձայն (V դ.) հոգևորականներն իրավունք չունեին առանց կողմերի համաձայնության կատարել պսակադրումը[44]։ VI դ., Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյանի կանոններով արգելվում էին ամուսնություններն առանց փոխադարձ համաձայնության[45]։ Առաջադիմական այս կանոնը տեղ է գտել հայկական բոլոր դատաստանագրքերում։

---

39 «Ուսումնասիրութիւնք լեհահայոց դատաստանագրոյն», Վիեննա, 1890, էջ 62—63։

40 Նույն տեղում, էջ 25։

41 Prawa y artikuły..., էջ 128։

42 Բ ժ շ կ յ ա ն, էջ 178։

43 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց», Իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան ծ. վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 375։

44 «Կանոնագիրք հայոց», հատ. Ա., աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 332։

45 Նույն տեղում, էջ 487։

Ամուսնացած կնոջ օժիտը մնում էր որպես մայրական ունեցվածք և նրա մահվան դեպքում, երբ ուղղակի ժառանգներ չէին լինում, վերադարձվում էր կնոջ ծնողներին կամ եղբայրներին[46]. Բաժանման դեպքում կինը և տղամարդը հավասար իրավունքներ ունեին դատարանի առջև։ Զույգերի անհամապատասխանության դեպքում ապահարզանի իրավունք ունեին նաև կանայք, որոնք հեռանալով ամուսնուց, տանում էին իրենց հետ նաև իրենց բերած օժիտը։ Եթե ամուսինը բաժանվում էր հիվանդ կնոջից, ապա պարտավոր էր նյութապես ապահովել նրան։ Կանանց չբերությունը տղամարդուն բաժանման իրավունք չէր տալիս, այդ բանը նա կարող էր անել միայն կնոջ համաձայնությամբ[47]։ Շահապիվանի կանոնների համաձայն (447 թ.) կնոջը լքած տղամարդուց վերցնում էին ունեցվածքի կեսը և տալիս կնոջը, իսկ երեխաներին նույնպես բաժանում էին ամուսինների միջև[48]։

Ինչպես տեսնում ենք, միջնադարյան Հայաստանում կանայք բավականին իրավունքներ են ունեցել։ Գաղթելով այլ երկրներ՝ հայերը պահպանում և զարգացնում էին իրենց ազգային սովորությունները, ավանդույթները, այդ թվում և կանանց նկատմամբ վերաբերմունքը։ Օտար միջավայրը, տվյալ դեպքում լեհ-ուկրաինական շրջապատը, դրական ազդեցություն է ունեցել նրանց վրա և այդ ավանդույթները ստացել են իրենց հետագա զարգացումը։

Պոդոլյեի հայ գաղութների ներքին կյանքի մանրամասնությունների՝ հասարակության շերտավորման, սոցիալական հարաբերությունների ու դասակարգային հակամարտության բացահայտումը հնարավորություն է ընձեռում ավելի ճիշտ հասկանալու, հետևապես բազմակողմանի ու խոր կերպով լուսաբանելու այդ գաղութների պատմությունը՝ մի բան, որ օգտակար կլինի նաև հայ-ուկրաինական ու հայ-լեհական հարաբերությունների հետագա ուսումնասիրման և ուկրաինական այդ երկրամասի անցյալ կյանքի պատկերն ամբողջացնելու գործին։

СОЦИАЛЬНЫЕ ОТНОШЕНИЯ В АРМЯНСКИХ КОЛОНИЯХ ПОДОЛИИ

В. Р. ГРИГОРЯН

(Резюме)

В своих исследованиях, посвященных армянам Подолии, составляющей значительную часть Правобережной Украины, буржуазные историки часто писали о богатстве этих армян и их больших материальных возможностях. Складывалось впечатление, что все они были достаточно обеспечены. Однако свидетельства современных авторов, протоколы армянского суда г. Каменец-Подольского и другие материалы содержат красноречивые факты о социальной дифференциации внутри армянских колоний. Ознакомление с многочисленными судебными актами убеждает, что руководители армянской администрации—войт и 12 судей, как правило, избирались из числа наиболее богатых и именитых горожан, в руках которых фактически и находился армянский суд. Свидетельства источников

46 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրքն», էջ 290։
47 «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, էջ 430։
48 «Մխիթարայ Գոշի դատաստանագիրք Հայոց», էջ 193—194։

приводят к выводу, что женщины играли значительную роль в жизни колоний: они обладали широкими правами, однако определенный имущественный ценз ограничивал эти права, и уважение, оказываемое женщинам зависело от их состояния.

Классовые противоречия и борьба угнетенных и эксплуатируемых против господствовавшего класса особенно обострились во время насильственной унии армянской церкви с католической.